ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Կ-183-20.12.2012-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-6-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) *1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝*

«Հոդված 1. Այլընտրանքային ծառայության մասին օրենսդրությունը

Այլընտրանքային ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով»՝ այնքանով, որքանով սույն օրենքով այլ բան նախատեսված չէ, այլ օրենքներով, ինչպես նաև սույն օրենքի հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:»

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Այլընտրանքային զինվորական ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը:

2. Պարտադիր զինվորական ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել այլընտրանքային ծառայությունը, իսկ այլընտրանքային ծառայություն անցնող քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել պարտադիր զինվորական ծառայությունը:»

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, ով մինչև հերթական զորակոչին նախորդող փետրվարի 1-ը կամ օգոստոսի 1-ը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով պարտադիր զինվորական ծառայությունն *այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու* մասին դիմել է այն տարածքային զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է, և ում այլընտրանքային ծառայության հարցերով

հանրապետական հանձնաժողովը (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) որոշել է ուղարկել այլընտրանքային ծառայության: Հանրապետական հանձնաժողովը մշտապես գործող մարմին է և կազմված է տարածքային կառավարման, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ոստիկանության և պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից: Հանրապետական հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենքի 5-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «36» թիվը փոխարինել «30» թվով.

2) 2-րդ մասում «42» թիվը փոխարինել «36» թվով:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում *««Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստեղծված տեղական զորակոչային հանձնաժողովը և* այլընտրանքային ծառայություն անցնելու մասին դիմումները քննարկող հանրապետական հանձնաժողովը (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով), որի ստեղծման, գործունեության կարգը և անդամների կազմը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «*տարածքային զինվորական կոմիսարիատը և* հանրապետական հանձնաժողովը» բառերով:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 7. Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմումը**

1. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացին *(այսուհետ՝ դիմումատու)* այլընտրանքային ծառայություն ընտրելիս սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ժամկետում գրավոր դիմում է ներկայացնում այն տարածքային զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է:

2. Դիմումի մեջ պետք է նշված լինեն այն ներկայացնելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը, *դիմումատուի* անունը, ազգանունը, հայրանունը, ստորագրությունը, բնակության վայրի հասցեն, նախընտրած այլընտրանքային ծառայության տեսակը, պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու հիմնավորումները:

3. Դիմումը գրանցվում է տարածքային զինվորական կոմիսարիատում:

4. Տարածքային զինվորական կոմիսարիատը պարզում է դիմումի ներկայացման՝ սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ժամկետի պահպանման հարցը: Եթե դիմումը ներկայացվել է այդ ժամկետի խախտմամբ, ապա տարածքային զինվորական

կոմիսարիատը դիմումը գրանցելու պահից 5 օրվա ընթացքում այն վերադարձնում է դիմումատուին: Տարածքային զինվորական կոմիսարիատը կարող է հարգելի համարել դիմումը ներկայացնելու ժամկետը բաց թողնելը, եթե այն բաց է թողնվել դիմումատուից անկախ պատճառներով:

5. Եթե դիմումը չի համապատասխանում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջներին, ապա այն 5 օրվա ընթացքում վերադարձվում է դիմումատուին՝ նշելով դիմումի մեջ թույլ տրված բոլոր ձևական սխալները: Դիմումը հետ վերադարձվելուց հետո երկշաբաթյա ժամկետում դիմումատուն իրավունք ունի վերացնել դիմումում թույլ տրված բոլոր ձևական սխալները և այն կրկին ներկայացնել տարածքային զինվորական կոմիսարիատ:

6. Տարածքային զինվորական կոմիսարիատը դիմումը *գրանցելու* պահից 30-նօրյա ժամկետում «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պարզում է *դիմումատուին* պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայությունը և դրանց բացակայության դեպքում ներկայացված դիմումը և *դիմումատուի* անձնական գործն ուղարկում է հանրապետական հանձնաժողով:

7. *Դիմումատուին* պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայության դեպքում դիմումը հանրապետական հանձնաժողովին չի ներկայացվում և *այն տարածքային զինվորական կոմիսարիատում գրանցվելու պահից 30 օրվա* ընթացքում վերադարձվում է *դիմումատուին*»:

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 8. Այլընտրանքային ծառայության մասին դիմումը քննարկելը**

1. Հանրապետական հանձնաժողովը ներկայացված դիմումը քննարկում է առանձին նիստում, որի անցկացման ժամանակի և վայրի մասին նախապես տեղեկացվում է *դիմումատուն*, որն իրավունք ունի մասնակցել հանրապետական հանձնաժողովի նիստին: Հանրապետական հանձնաժողովի պահանջի դեպքում *դիմումատուի* մասնակցությունը հանձնաժողովի նիստին պարտադիր է:

2. Հանրապետական հանձնաժողովի նիստին կարող են հրավիրվել կրոնագետներ, *հոգեբաններ և այլ մասնագետներ,* այլընտրանքային ծառայության վայրերի հիմնարկների, կրոնական և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ անձինք:»:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1.-ին հոդվածով.

«**Հոդված 8.1. Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին հանրապետական հանձնաժողովի որոշումը**

1. Հանրապետական հանձնաժողովը յուրաքանչյուր դիմումի վերաբերյալ որոշում է կայացնում նիստին ներկա անդամների ձայների 2/3-ով, *եթե հանձնաժողովի նիստին ներկա են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումն* ընդունման պահից 10 օրվա ընթացքում ուղարկվում է *դիմումատուին* և համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատ:

2. Դիմումը քննարկելու արդյունքում հանրապետական հանձնաժողովը որոշում է կայացնում *դիմումատուին* նրա նախընտրած այլընտրանքային ծառայության ուղարկելու կամ դիմումը մերժելու մասին:

3. Դիմումը բավարարելու և *դիմումատուին* այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկելու մասին որոշմամբ հանրապետական հանձնաժողովը սահմանում է նաև այլընտրանքային աշխատանքային ծառայության ընթացքում *դիմումատուի* կողմից կատարվող աշխատանքների տեսակը և բնույթը: Այլընտրանքային աշխատանքային ծառայության ուղարկված անձանց կողմից այլընտրանքային աշխատանքային ծառայության ընթացքում կատարվող աշխատանքների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Դիմումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում հանրապետական հանձնաժողովը նշում է դիմումը մերժելու հիմքերը և այն վիճարկելու կարգը:

5. Հանրապետական հանձնաժողովի կողմից դիմումը քննարկելու և դրա վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը չի կարող գերազանցել մեկ ամիսը»:

Հոդված 9. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետում «կրկին» բառը փոխարինել «երկրորդ անգամ» բառերով.

2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) *դիմումատուն* ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ.».

3) 1-ին մասում լրացնել 3–րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«3) դիմումն ակնհայտ անհիմն է:».

4) 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 10. Օրենքի 10-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 11. *Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝*

«Հոդված 11. Այլընտրանքային ծառայության հետ կապված վեճերի լուծումը

Այլընտրանքային ծառայության հետ կապված վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:»

Հոդված 12. Օրենքի 13-րդ հոդվածում «զորակոչային» բառը փոխարինել «հանրապետական» բառով:

Հոդված 13. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 14. Այլընտրանքային *ծառայության կազմակերպումն ու իրականացումն* ապահովելը

1. Այլընտրանքային զինվորական ծառայության իրականացումը կազմակերպում և վերահսկում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

2. Այլընտանքային աշխատանքային ծառայության իրականացումը կազմակերպում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (մարմինները):

3. Այլընտրանքային աշխատանքային ծառայության նկատմամբ չի կարող սահմանվել զինվորական վերահսկողություն:

4. Այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայությունն անցնում են այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպություններում:

5. Այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրի կազմակերպությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Այլընտրանքային ծառայությունը կազմակերպվում և իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին»:

Հոդված 14. Օրենքի 15-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 15. *Օրենքի 16-րդ հոդվածը լրացնել նոր 9-րդ մասով հետևյալ բովանդակությամբ՝*

«1.1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է նույն զորամասում այլընտրանքային զինվորական ծառայողների առավելագույն թիվը»:

Հոդված 16. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Այլընտրանքային աշխատանքային ծառայության կանչված քաղաքացին պարտավոր է սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով տրված ծանուցագրում նշված օրը ներկայանալ այլընտրանքային աշխատանքային ծառայության վայր: Քաղաքացին այլընտրանքային աշխատանքային ծառայության վայր մեկնում է իր միջոցների հաշվին:».

2) 2-րդ մասից հանել «՝ ապահովելով լրիվ զբաղվածություն» բառերը, «, «կազմակերպության գտնվելու վայրի» բառերը փոխարինել «քաղաքացուն ծանուցագիր հանձնած» բառերով.
3) 3-րդ մասում «պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի» բառերը փոխարինել «հանրապետական հանձնաժողովի» բառերով.
4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրը, որպես կանոն, պետք է լինի այլընտրանքային ծառայողի հաշվառման վայրից /հաշվառման վայր չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրից/ ոչ ավել, քան 30 կմ հեռավորության վրա: Հակառակ դեպքում այլընտրանքային աշխատանքային ծառայողին վճարվում է փոխհատուցում, որի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»

5) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 17. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ապահովում է սննդով, սահմանված ձևի արտահագուստով, ներքնաշորերով, քնելատեղով, անկողնային և անձնական հիգիենայի պարագաներով,» բառերը հանել.

2) 2-րդ մասը *շարադրել հետևյալ խմբագրությամբ՝*

«2. Կազմակերպության ղեկավարն այլընտրանքային աշխատանքային ծառայողի համար ապահովում է այնպիսի աշխատանքային պայմաններ, որոնք պարտավոր էր ապահովել նույն բնույթի աշխատանքներ կատարող այլ պայմանագրային կամ հաստիքային աշխատողի համար»:

Հոդված 18. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Այլընտրանքային» բառից հետո լրացնել «զինվորական» բառը.

2) լրացնել նոր 1.1 մաս հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Այլընտրանքային աշխատանքային ծառայողին տրվում է ամսական դրամական բավարարում՝ մինչև երեսուն հազար դրամի չափով».

3) 2-րդ մասում «որպես խրախուսանք կարող է տրվել 15 օրացուցային օր տևողությամբ միանվագ արձակուրդ» բառերը փոխարինել «տրվում է տարեկան 10 օրացուցային օր տևողությամբ արձակուրդ» բառերով:

4) 4-րդ մասում «կրել սահմանված նմուշի արտահագուստ,» բառերը հանել.

5) 5-րդ մասում «օրական 8» բառերը փոխարինել «շաբաթական 48» բառերով:

Հոդված 19. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել 3-րդ և 4-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ՝

«3. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի տասներկուերորդ և տասներեքերորդ մասերով նախատեսված դեպքերում սույն օրենքի 5-րդ հոդվածում նախատեսված՝ այլընտրանքային ծառայության ժամկետը նվազեցվում է անձի՝ քրեական պատիժ կրելու կամ քրեական հետապնդման ենթարկվելու արդյունքում անազատության մեջ գտնվելու ժամկետով:

4. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի տասներկուերորդ և տասներեքերորդ մասերով նախատեսված դեպքերում դիմումը ներկայացվում է հանրապետական հանձնաժողով, որը սույն օրենքի 8-րդ և 8.1-րդ հոդվածներով նախատեսված ընդհանուր կարգով քննում է անձի դիմումը և որոշում կայացնում անձին նրա նախընտրած այլընտրանքային ծառայությանն ուղարկելու կամ դիմումը մերժելու մասին: Այլընտրանքային ծառայության ուղարկելու մասին դիմումը բավարարելու դեպքում կայացված որոշման մեջ նշվում է նաև այլընտրանքային ծառայություն անցնելու ժամկետը՝ հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ մասի պահանջները:»

ՀՈԴՎԱԾ 20. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
Աժ պագամավոր Հերմինե Նաղդալյան	Չբացառելով նշված օրենքի ընդունման անհրաժեշտությունը հարկ է նշել, որ խնդիրը պետք է լուծվի ազգային անվտանգության առանցքի շուրջ: Այլընտրանքային զինվորական և այլընտրանքային աշխատանքային ծառայությունը պետք է լինի ոչ նվաստացուցիչ, սակայն ոչ դյուրին, ոչ գայթակղիչ, այլ վանող ծառայություն: Հետագա հնարավոր բացասական հետևանքներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի հատկապես այլընտրանքային աշխատանքային ծառայությունն անցկացվի հիմնականում սահմանային գոտում և ոչ թե բնակավայրից մինչև 30 կիլոմետր հեռավորության վրա, այլ նվազագույնը 50 կիլոմետր հեռավորությամբ: Վերոգրյալի հիման վրա՝ օրենքի նախագծի	Չի ընդունվել	Այլընտրանքային աշխատանքային ծառայությունը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է, որպեսզի հնարավոր լինի բավարար ճկունությամբ տեղաբաշխել այլընտրանքային աշխատանքային ծառայողներին այն վայրերում, որոնցում տվյալ ժամանակահատվածում առկա է աշխատանքների կատարման անհրաժեշտություն: Բացի այդ, հարկ է նկատել, որ սահմանային գոտում ծառայություն անցնելը կարող է լինել ոչ այնքան իրատեսական, երբ սահմանային գոտում հնարավոր չլինի գործնականում ապահովել աշխատանքային ծառայության իրականացումը համապատասխան աշխատանքի բացակայության պատճառով: Նման դեպքերում նախագծով նախատեսված կարգավորումները՝ ի տարբերություն առաջարկվող լուծումների, հնարավորություն կտան բավարար ճկունությամբ տեղաբաշխել այլընտրանքային աշխատանքային ծառայողներին: Ինչ վերաբերում է բնակավայրից առնվազն 30 կմ հեռավորության վերաբերյալ դրույթը 50 կմ-ի

	վերաբերյալ ներկայացվում են հետևյալ առաջարկությունները: 1. Նախագծի 13-րդ հոդվածի առաջին մասի վերջին նախադասությունը լրացնել հետևյալ բառերով. «, հետագա փոխհատուցման պայմանով, որի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: 2. Նախագծի 13-րդ հոդվածի 4-րդ մասում «ոչ ավել, քան 30 կիլոմետր» բառերը փոխարինել «ոչ պակաս, քան 50 կիլոմետր» բառերով: Նույն մասի վերջին նախադասությունը հանել: 3. Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ 2) լրացնել նոր՝ 1.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ. «Այլընտրանքային աշխատանքային ծառայողին իր կենսական կարիքները հոգալու համար տրվում է ամսական դրամական բավարարում, որի չափը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ոչ պակաս, քան 50 հազար դրամի չափով»:		պահանջով փոխարինելուն, ապա վերոգրյալը վերաբերում է նաև այս առաջարկությանը: Դրանից զատ, հարկ է նկատել, որ առաջարկի ընդունման պարագայում կմեծանան պետական բյուջեի ծախսերը, քանի որ այդ դեպքում այլընտրանքային աշխատանքային ծառայողներին տրվելու են լրացուցիչ փոխհատուցումներ:
ԱԺ պագամավոր Կորյուն Նահապետյան	1. <u>**Առաջարկ**</u>: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում լրացնել 2-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «Պարտադիր զինվորական ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել այլընտրանքային ծառայություն, իսկ այլընտրանքային ծառայություն անցնող քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել պարտադիր զինվորական ծառայություն»: **<u>Հիմնավորում:</u>** Նման փոփոխություն նախատեսելու հիմնական նպատակը տարակարծությունների վերացումն ու նշված	1. Ընդունվել է	1. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	հարցում հստակեցում մտցնելն է: 2. **<u>Առաջարկ:</u>** «Այլընտրանքային ծառայության» մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում «տեղական զորակոչային հանձնաժողովը» բառերը փոխարինել «տարածքային զինվորական կոմիսարիատը» բառերով: **<u>Հիմնավորում:</u>** Ո՛չ Օրենքում, ո՛չ էլ Նախագծում չի հիշատակվում զորակոչային հանձնաժողովը և նրա համար սահմանված էլ չեն որևէ լիազորություններ: Նախագծի 7-րդ հոդվածի համաձայն քաղաքացին իր դիմումը ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ և տարածքային զինվորական կոմիսարիատը պարզում է, թե արդյոք առկա են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերը: Որևէ նշում չկա դիմումը տեղական զորակոչային հանձնաժողովին ուղարկելու մասին: Բոլորովին այլ կարգավորում է տրված 10.03.2005 թ. «Այլընտրանքային ծառայություն անցնելու մասին դիմումները քննարկող հանրապետական հանձնաժողովի ստեղծման, գործունեության կարգը և անդամների կազմը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N-271 որոշման մեջ: Հիմք ընդունելով ներկայացված Նախագծի կարգավորումը՝ գտնում ենք, որ ճիշտ չէ տեղական զորակոչային հանձնաժողովին նշել որպես այլընտրանքային ծառայության անցկացման հարցերով զբաղվողի:	2. Ընդունվել է	2. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	3. **<u>Առաջարկ:</u>** «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածում նախատեսում է Օրենքի 7-րդ հոդվածը	3. Բովանդակային առումով	3. Նախագծի 6-րդ հոդվածը վերաշարադրվել է՝ ներառելով առանձին կարգավորումներ դիմումը ներկայացնելու ժամկետների պահպանման, դիմումում ձևական

	շարադրել նոր բովանդակությամբ: Առաջարկում ենք նշված հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Քաղաքացու դիմումը գրանցվում է տարածքային զինվորական կոմիսարիատում, որը դիմումը ստանալու պահից 30-օրյա ժամկետում պարզում է՝ արդյոք պահպանվել են դիմումը ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետները, ինչպես նաև «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պարզում է դիմում ներկայացրած քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայությունը: Ժամկետների պահպանված լինելու և նշված հիմքերի բացակայության դեպքում ներկայացված դիմումն ու դիմողի անձնական գործը ուղարկվում է հանրապետական հանձնաժողովին»: Առաջարկում ենք նույն հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Եթե դիմում ներկայացրած քաղաքացին չի պահպանել դիմում ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետները կամ առկա են պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերը, տարածքային զինվորական կոմիսարիատը դիմումը հանարպետական հանձնաժողովին չի ներկայացվում և, դիմումը, ներկայացնելու օրվանից 10 օրվա, ընթացքում վերադարձվում է դիմումը ներկայացրած անձին»: **<u>Հիմնավորում:</u>** Այս կարգավորումը անհրաժեշտ է, քանի որ պարզ չէ, թե ինչ է լինում դիմումի հետ, եթե այն ներկայացնելու ժամկետները չեն պահպանվել. արդյո՞ք այն տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից վերադարձվում է դիմում	ընդունելի է	սխալների առկայության, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տալու հիմքերի առկայության ստուգման մասին:

	ներկայացրած անձին, թե ուղարկվում է հանրապետական հանձնաժողով: Ըստ էության, դիմումը հանրապետական հանձնաժողով չի ուղարկվում, քանի որ, եթե ուղարկվեր, այն պետք է մերժվեր հանրապետական հանձնաժողովի կողմից, սակայն Օրենքի 9-րդ հոդվածում մերժման նման հիմք նախատեսված չէ:		
	4. **<u>Առաջարկ:</u>** «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածը նախատեսում է Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ: Առաջարկում ենք նշված հոդվածի 3-րդ մասում «կրոնագետներ» բառից հետո լրացնել «հոգեբաններ և այլ մասնագետներ» բառերը:	4.Ընդունվել է	4. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	5. **<u>Առաջարկ:</u>** «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածը նախատեսում է Օրենքում ավելացնել 8.1 հոդված՝ «Պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին հանրապետական հանձնաժողովի որոշումը» վերատառությամբ: Առաջարկում ենք նշված հոդվածում լրացնել 6-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «Հանրապետական հանձնաժողովը ղեկավարվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նորմերով, այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին»: **<u>Հիմնավորում:</u>** Լրացման հիմնական նպատակը հանրապետական հանձնաժողովի կարգավիճակի հստակեցումն է: Կարգավիճակի հստակեցման հետ մեկտեղ, նման լրացումը թույլ կտա պատասխանել այնպիսի հարցերի, թե ինչ սկզբունքներով է	5.Բովանդակային առումով ընդունելի է	5. Համապատասխան փոփոխություններ են կատարվել գործող օրենքի 1-ին հոդվածում:

	հանրապետական հանձնաժողովը կայացնում որոշում, ինչպիսի ապացուցողական բազայի վրա կարող է հիմնվել և այլն: 6. <u>Առաջարկ</u>: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում «ընդունելու» բառը փոխարինել «ստանալու» բառով: <u>Հիմնավորում:</u> Օրենքի 11-րդ հոդվածը ուղղակիորեն սահմանափակում է անձի՝ որոշումը բողոքարկելու իրավունքը: Անձը չի կարող բողոքարկել որոշումը, քանի դեռ չի իմացել նման որոշման կայացման մասին: Ըստ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի՝ անձի ներկայությունը հանրապետական հանձնաժողովի նիստերին պարտադիր չէ և, այս պարագայում, անձը կիմանա կայացված որոշման մասին միայն այն պատշաճ ձևով ստանալու դեպքում:	6. Բովանդակային առումով ընդունելի է.	6. Գործող օրենքի 11-րդ հոդվածը վերաշարադրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 11. Այլընտրանքային ծառայության հետ կապված վեճերի լուծումը Այլընտրանքային ծառայության հետ կապված վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:»
	7. <u>Առաջարկ:</u> Օրենքի 11-րդ հոդվածում «դատարան» բառից առաջ լրացնել «վարչական» բառը:	7. Բովանդակային առումով ընդունվել է.	7. Տես՝ կետ 6-ը:
	8. <u>Առաջարկ</u>: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածը սահմանում է փոփոխություն «Այլընտրանքային ծառայության» մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում: Առաջարկում ենք նշված հոդվածում լրացնել 5-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «Այլընտրանքային ծառայության կազմակերպման և իրականացման ծախսերը ֆինանսավորվում են	8.Բովանդակային առումով ընդունելի է	8. Նախագծի 13-րդ հոդվածում լրացվել է 6-րդ մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Այլընտրանքային ծառայությունը կազմակերպվում և իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին»:

	պետական բյուջեի միջոցների հաշվից»: **<u>Հիմնավորում:</u>** «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդվածը նախատեսում է Օրենքի 19-րդ հոդվածում ավելացնել 1.1 մասը, որը կսահմանի. «Այլընտրանքային աշխատանքային ծառայողին տրվում է ամսական դրամական բավարարում՝ մինչև երեսուն հազար դրամի չափով»: Միևնույն ժամանակ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածը նախատեսում է Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրը, որպես կանոն, պետք է լինի այլընտրանքային ծառայողի հաշվառման վայրից /հաշվառման վայր չունենալու դեպքում՝ փաստացի բնակության վայրից/ ոչ ավել, քան 30 կմ հեռավորության վրա: Հակառակ դեպքում այլընտրանքային աշխատանքային ծառայողին վճարվում է փոխհատուցում, որի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»: Բացի այդ, ներկայումս քրեակատարողական հիմնարկներում ունենք 34 անձ, որոնց դատվածությունը պետք է հանվի, որի դեպքում կառաջանա ազատազրկման դիմաց փոխհատուցում տալու խնդիր: Ինչպես տեսնում ենք, առաջանում է դրամական փոխհատուցման խնդիր, որի վճարման աղբյուրը հստակ չի երևում: 9. **<u>Առաջարկ:</u>** Նախագծի 11-րդ հոդվածում, որը նախատեսում է փոփոխություն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում, 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ. *«Այլընտրանքային աշխատանքային ծառայության*	9. Ընդունվել է	9. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	նկատմամբ չի կարող սահմանվել զինվորական վերահսկողություն»: **<u>Հիմնավորում:</u>** Նման փոփոխություն նախատեսելու հիմնական նպատակը տարակարծությունների վերացումն ու նշված հարցում հստակեցում մտցնելն է: 10. **<u>Առաջարկ:</u>** Առաջարկում ենք Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում «ծառայողին» բառը փոխարինել «ծառայողի» բառով, որից հետո լրացնել հետևյալ բառերը՝ «հետ ծառայության ժամկետով կնքում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր»: Նման փոփոխության դեպքում 17-րդ հոդվածի 2-րդ մասը կունենա հետևյալ բովանդակությունը. «Այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրի կազմակերպության ղեկավարը այլընտրանքային աշխատանքային ծառայողի հետ ծառայության ժամկետով կնքում է ժամանակավոր աշխատանքային պայմանագիր, այլընտրանքային աշխատանքային ծառայողին ընդգրկում է կազմակերպության հաստիքացուցակում, որոշում է նրա աշխատանքի տեսակը, կարգն ու պայմանները և եռօրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնում է քաղաքացուն ծանուցագիր հանձնած զինվորական կոմիսարիատին»: Առաջարկում ենք նաև նույն հոդվածում լրացնել 2.1 մաս հետևյալ բովանդակությունը. «Այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամանակ առաջացող հարաբերությունների նկատմամբ տարածվում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերը, այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին և նման ծառայության էությանն ու բնույթին»: **<u>Հիմնավորում:</u>** Այս կարգավորումն անհրաժեշտ է,	10 Ընդունվել է մասնակի	10. Աշխատանքային պայմանագիր կնքելու մասով առաջարկն ընդունելի չէ, քանի որ այլընտրանքային ծառայողի և համապատասխան կազմակերպության միջև հարաբերությունները չեն կրում պայմանագրային բնույթ, ուստի չեն կարող կարգավորվել պայմանագրով, հետևաբար, նաև դրանց վրա չեն կարող տարածվել աշխատանքային օրենսգրքի դրույթերը՝ անգամ այնքանով, որքանով դրանք չեն հակասում օրենքին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այլընտրանքային աշխատանքային ծառայողներն, ըստ էության, կատարում են աշխատանք և պետք է ապահովված լինեն համապատասխան աշխատանքային պայմաններով, ուստի նախագծում նախատեսվել է, որ այլընտրանքային աշխատանքային ծառայողների համար պետք է ստեղծվեն համապատասխան աշխատանքային պայմաններ, ինչպես նաև սահմանվի ամենամյա արձակուրդի հնարավորություն: Մնացյալ հարցերի լուծումը հնարավոր է օրենքի, այն է՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի անալոգիայի կիրառման եղանակով:

	որպեսզի հստակեցվի կազմակերպության ղեկավարի և այլընտրանքային աշխատանքային ծառայողի միջև առաջացող հարաբերությունները: Նմանատիպ դրույթներ սահմանելու դեպքում կլուծվեն մի շարք հարցեր՝ կապված այլընտրանքային աշխատանքային ծառայողների իրավունքների և պարտականություններ, ինչպես նաև պատասխանատվության հետ: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 10-րդ հոդվածը թույլ է տալիս աշխատանքային օրենսդրության դրույթների անալոգիայով կիրառման հնարավորություն. «Եթե աշխատանքային հարաբերություններն ուղղակիորեն կարգավորված չեն օրենքով, ապա նման հարաբերությունների նկատմամբ, եթե դա չի հակասում դրանց էությանը, կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող աշխատանքային օրենսդրության նորմերը (օրենքի անալոգիա)»: ՀՀ սահմանադրական դատարանը իր 18.07.2012թ. ՍԴՈ 1038 որոշմամբ արձանագրել է. «Աշխատանքային օրենսգիրքը աշխատանքային հարաբերությունների ծագման միակ հիմքը սահմանելով աշխատանքային պայմանագիրը, չի բացառում գրավոր աշխատանքային պայամանգրի բացակայության պայմաններում աշխատանքային հարաբերություններից բխող աշխատանքային պարտականությունների փաստացի կատարման առկայության ապացուցման դեպքում անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության իրավունք»: Ինչպես աշխատանքային օրենսգրքի հիշյալ դրույթից, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի որոշումից, պարզ է, որ ամեն դեպքում այլընտրանքային աշխատանքային ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել աշխատանքային		

	օրենսդրության դրույթները: Ուստի՝ ավելի ճիշտ ենք համարում «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում նախատեսել առաջարկված դրույթները: 11. **<u>Առաջարկ:</u>** «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 13-րդ հոդվածը նախատեսում է ուժը կորցրած ճանաչել Օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը: Առաջարկում ենք Օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Այլընտրանքային աշխատանքային ծառայողը ծառայության ընթացքում չի կարող նշանակվել ղեկավար պաշտոններում»:	11. Չի ընդունվել	11. Առաջարկությունը չի բխում միջազգային չափանիշներից, ինչպես նաև այն անհրաժեշտ չէ օրենքով սահմանված նպատակներին հասնելու համար, հետևաբար, համաչափ չէ: Ակնհայտ է, որ խոսքը բացառապես այնպիսի ղեկավար պաշտոնների մասին է, որոնք ուղղակիորեն սահմանվելու են ՀՀ կառավարության կողմից հաստատվող աշխատանքային ծառայության ընթացքում կատարվող աշխատանքներին վերաբերող ցանկում: Դրանից հետևում է, որ խոսք լինել չի կարող «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների կամ հատուկ ծառայությունների մասին օրենքների իմաստով ղեկավար պաշտոններում այլընտրանքային ծառայողների ներգրավման մասին: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Վենետիկյան հանձնաժողովի կողմից ներկայացված կարծիքի մեջ (մասնավորապես, տես՝ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 2011թ. դեկտեմբերի 16-17-ին կայացած Վենետիկյան հանձնաժողովի 89-րդ լիագումար նիստի ժամանակ ընդունված թիվ 644/2011 կարծիքի 30-31-րդ կետերը) հատուկ ընդգծվել է, որ չափազանց խիստ է (գործող օրենքի) այն սահմանափակումը, համաձայն որի՝ այլընտրանքային աշխատանքային ծառայողը

	12. <u>Առաջարկ</u>: Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածը նախատեսում է ուժը կորցրած ճանաչել: Առաջարկում ենք Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կազմակերպության ղեկավարը ծառայության վայրում պարտավոր է ապահովել այլընտրանքային աշխատանքային ծառայողի անվտանգությունը, հետևել ծառայության կատարման ընթացքին, աշխատողին ծանոթացնել աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին»: <u>**Հիմնավորում:**</u> Կազմակերպության ղեկավարը պետք է ունենա որոշակի պարտականություններ, որոնք ուղղված են ապահովելու աշխատողի անվտանգությունը: 13. <u>Առաջարկ</u>: «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի գործողությունը դադարեցնել և ուժը կորցրած ճանաչել :	12. Ընդունվել է մասնակի	ծառայության ընթացքում չի կարող նշանակվել ղեկավար պաշտոնում: Նման սահմանափակումը կարող է լրջորեն վնասել տվյալ ծառայողի հետագա աշխատանքային առաջընթացին և նման դրույթի պահպանումը պետք է լուրջ հիմնավորում ունենա: Այն նաև չի բխում հենց նույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասից, որի համաձայն՝ այլընտրանքային ծառայության նպատակը հայրենիքի և հասարակության առջև քաղաքացիական պարտքի կատարման ապահովումն է և *չունի պատժիչ, անձի պատիվը և արժանապատվությունը նվաստացնող բնույթ*: Հետևաբար, գործող օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել: 12. Տես՝ կետ 10-ը:

	<u>Հիմնավորում:</u> ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածի համաձայն. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը կախված սեռից...կրոնից... կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից արգելվում է»: Միայն այն պատճառով, որ անձը անցել է այլընտրանքային ծառայություն, հիմք չէ խտրական վերաբերմունք դրսևորելու համար: Յուրաքանչյուր դեպքում անձն ինքն է որոշում զենք կրել, պահել, պահպանել կամ օգտագործել:	13. Չի ընդունվել	13. Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սահմանափակումը ըստ էության այն նվազագույն սահամանափակումն է, որ կարող է դրվել այլընտրանքային ծառայողի վրա պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու հետևանքով: Անձը, դիմելով այլընտրանքային ծառայություն անցնելու նպատակով, պետք է գիտակցի, որ այլընտրանքային ծառայություն անցնելուց հետո նրան հետագայում արգելվելու է ուղղակիորեն կամ անուղղակիորեն զենք կրել: Մյուս կողմից, զենք կրելու սահմանափակումն արդարացված է, քանի որ այլընտրանքային ծառայողը, չանցնելով պարտադիր զինվորական ծառայություն, չի տիրապետում զենք կրելու, պահպանելու, կիրառելու հմտություններին: Հետևաբար, սույն սահամանափակումը համարժեք է հետպնդվող նպատակին և արդարացված է Սահմանադրության տեսանկյունից:
Աժ պագամավոր Վ. Բաղդասարյան	Օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Այլընտրանքային աշխատանքային ծառայության վայրը որպես կանոն պետք է լինի սահմանամերձ գոտիներում»:	Չի ընդունվել	Տես՝ պատգամավոր Հ. Նաղդալյանի առաջարկության վերաբերյալ եզրակացությունը:
Աժ պագամավորներ Հերմինե Նաղդալյան Հայկ Բաբուխանյան Ռուզաննա Մուրադյան Մարգարիտ Եսայան Շուշան Պետրոսյան Կարինե Պողոսյան	1) 1-հոդվածում նոր խմբագրությամբ շարադրված «հոդված 3»-ը ներկայացնել հետևյալ խմբագրությամբ: «1.Այլընտրանքային զինվորական ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով ունի այնպիսի խորապես արմատավորված կրոնական դավանանք կամ համոզմունք, որի կազմակերպությունը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում և հանրահայտ կերպով, բացարձակապես մերժում է զենք կրելը,	1) Չի ընդունվել	1) Առաջարկության ընդունումը կարող է հանգեցնել դավանանքի կամ համոզմունքների քննության ընթացակարգի ներդրմանը, ինչպես նաև վարչական մարմնին այնքան լայն գնահատողական լիազորության վերապահմանը, որը կարող է նպաստել կամայական վարչական պրակտիկայի ձևավորմանը: Բացի այդ, անձի կրոնական դավանանքի կամ համոզմունքի ազատությունը ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների

	պահելը, պահպանելը կամ օգտագործելը Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որը ունի այնպիսի խորապես արմատավորված կրոնական դավանանք կամ համոզմունք, որի կազմակերպությունը գրանցված է Հայաստանի Հանրապետությունում և հանրահայտ կերպով, բացարձակապես մերժում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը:»		պաշտպանության մասին Կոնվենցիայի» 9-րդ հոդվածը չեն պայմանավորում որևէ կազմակերպության առկայությամբ, որին անձը պետք է պատկանի, ինչպես նաև չեն պայմանվորում այդ կազմակերպության գրանցման փաստով: Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը կարող է իրացվել ինչպես անհատապես, այնպես էլ կոլեկտիվ՝ որևէ խմբի կամ կազմակերպության շրջանակներում, հետևաբար, կրոնական դավանանքը կամ համոզմունքը բազում դեպքերում կարող է արմատավորված լինել անհատների մոտ, որոնք չեն պատկանում որևէ գրանցված կրոնական միավորման: Բացի այդ, հարկ է նշել, որ օրենքը չի կարող ամրագրել այնպիսի լիազորություններ, որոնք բնորոշ չեն հանրապետական հանձնաժողովին: Նման լիազորությունները կարող են վերապահվել բացառապես կրոնական կազմակերպությունների գրանցման առնչությամբ, այն էլ շատ ավելի սահմանափակ ծավալով: Ինչ վերաբերում է չափանիշների հարցին ընդհանրապես, ապա դրա առնչությամբ հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը «Բայաթյանն ընդդեմ Հայաստանի» գործով վճռում նշել է, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի շրջանակներում զինվորական ծառայությունից հրաժարվելը կարող է լինել ընդունելի, եթե անձի հավատքը կամ համոզմունքը լինի՝ ա/ բավարար չափով հիմնավոր, բ/ լուրջ, գ/ հետևողական, դ/ կարևոր: Հարկ է նկատել, որ այս հասկացությունները նույնպես անորոշ են և անհրաժեշտաբար պետք

			է կոնկրետացվեն հետագա վարչական և դատական պրակտիկայում: Դրանք այնքան հստակ չեն, որպեսզի ամրագրվեն օրենքում: Գտնում ենք, որ նախագծից բխող մոտեցումը, ըստ որի դավանանքին կամ համոզմունքին հակասելու փաստական հանգամանքների ապացուցման բեռը կրում է այլընտրանքային ծառայության համար դիմած անձը, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները (մասնավորապես, գործի հանգամանքների ի պաշտոնե քննությունը և այլն) իրենց համակցության մեջ թույլ են տալիս, որպեսզի հանրապետական հանձնաժողովը բավարարի միայն այն դիմումները, որոնք փաստեր և հիմնավորումներ են պարունակում այլընտրանքային ծառայություն անցնելու վերաբերյալ և դրանք իրենց ամբողջության մեջ ողջամիտ են ու չեն հարուցում կասկածներ:
	2) Հոդված 2-ում նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում «ոստիկանության» բառից հետո ավելացնել «Ազգային անվտանգության» բառերը, իսկ «ստորաբաժանման» բառից հետո ավելացնել «Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու, ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի, Գիտությունների Ազգային Ակադեմիայի» բառերը:	2) Չի ընդունվել	2) «ՀՀ Ազգային անվտանգության» բառերը լրացնելը հնարավոր չէ, քանի որ այլընտրանքային զինվորական ծառայության անցնելու հետ կապված հարցերը դուրս են ՀՀ ազգային անվտանգության ծառայության լիազորությունների շրջանակներից: Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու ներկայացուցիչներին ներառելը հնարավոր չէ, քանի որ, ըստ ՀՀ Սահմանադրության 8.1-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող *բոլոր* կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը: Ինչ վերաբերում է ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի,

			Գիտությունների Ազգային Ակադեմիայի ներկայացուցիչների վերաբերյալ առաջարկին, ապա գտնում ենք, որ հիմնավոր չէ առանձին կրթական կամ գիտական հաստատություններ առանձնացնելը և դրանց ներկայացուցիչներին հանրապետական հանձնաժողովի կազմում ընդգրկելը: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախագծի 6-րդ հոդվածով փոփոխվող գործող օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը հնարավորություն է ընձեռում հանրապետական հանձնաժողովի նիստին հրավիրել կրոնագետների, հոգեբանների, այլ մասնագետների, այլընտրանքային ծառայության վայրերի հիմնարկների, կրոնական և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների *և այլ անձանց*:
	3) Հոդված 3-ում «30» թիվը փոխարինել «33»-ով:	3) Չի ընդունվել	3) Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախագծում այլընտրանքային զինվորական ծառայության համար «30» ամիս նախատեսելը պայմանավորված է միջազգային չափանիշներով (մասնավորապես, տես՝ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 2011թ. դեկտեմբերի 16-17-ին կայացած Վենետիկյան հանձնաժողովի 89-րդ լիագումար նիստի ժամանակ ընդունված թիվ 644/2011 կարծիքի 13-18-րդ կետերը): Համաձայն դրանց, այլընտրանքային ծառայության ժամկետը չպետք է 1.5 անգամ գերազանցի պարտադիր զինվորական ծառայության ժամկետը: Դրանից ելնելով, նախագծում այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետ է սահմանվել 36 ամիսը, և հաշվի առնելով այդ

			համամասնությունը՝ այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետ է նախատեսվել 30 ամիսը՝ որպես միջանկյալ ժամկետ այլընտրանքային աշխատանքային ծառայության և պարտադիր զինվորական ծառայության ժամկետների համեմատ: Իսկ առաջարկվող ժամկետի սահմանման պարագայում այլընտրանքային զինվորական ծառայության և այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետները մոտեցվում են իրար, ինչը դուրս է գալիս համակարգային լուծումների շրջանակներից, քանի որ այլընտրանքային ծառայության այդ տեսակները միմյանցից զգալիորեն տարբերվում են իրենց բովանդակությամբ և պայմաններով:
	4) Հոդված 5-ում նոր խմբագրությամբ շարադրված օրենքի 7-րդ Հոդվածի 2-րդ կետում վերջակետից առաջ ավելացնել հետևյալ բառերը «այդ թվում համապատասխան հանրահայտ կրոնական դավանանքի կամ համոզմունքի դիմողի մոտ խորապես արմատավորված լինելու ապացույցները»:	4)Չի ընդունվել	4) Տես՝ 1-ին կետը:
	5) Հոդված 5-ում 2-րդ կետի «նախընտրած այլընտրանքային ծառայության տեսակը» բառերը հանել՝ այդ գործառույթը վերապահելով Հանրապետական հանձնաժողովին:	5) Չի ընդունվել	5) Առաջարկը ընդունելի չէ՝ հաշվի առնելով, որ նախագիծը նախատեսում է այլընտրանքային ծառայության երկու տեսակ՝ այլընտրանքային զինվորական ծառայություն և այլընտրանքյին աշխատանքային ծառայություն, և դրանցից յուրաքանչյուրի համար սահմանում է առանձին կարգավորումներ: Ուստի անհրաժեշտ է այլընտրանքային ծառայության համար դիմած անձին հնարավորություն ընձեռել, որպեսզի նա

			ինքը որոշի այլընտրանքային ծառայության այն տեսակը, որը համապատասխանում է իր կրոնական դավանանքին կամ համոզմունքներին:Իսկ հանրապետական հանձնաժողովը չի կարող քաղաքացու փոխարեն ինքնուրույն որոշել, թե այլընտրանքային ծառայության կոնկրետ որ տեսակն է համապատասխանում նրա կրոնական դավանանքին կամ համոզմունքներին: Այդ իսկ պատճառով նախագծով սահմանված է, որ հանձնաժողովը իրավասու է միայն բավարարելու կամ մերժելու դիմումը, որում նշված է այլընտրանքային ծառայության տեսակը: Բացի այդ, հնարավոր չէ քաղաքացուն զրկել հնարավորությունից՝ իր դիմումում նշելու այլընտրանքային ծառայության նախընտրած տեսակը, եթե առկա է այլընտրանքային ծառայության երկու տեսակ:
	6) Հոդված 7-ում օրենքի 8.1 Հոդվածի 1-ին կետում «ձայների 2/3 -ով» բառերից հետո ավելացնել «բայց ոչ պակաս, քան հանձնաժողովի անդամների ձայների կեսը» բառերը:	6) Ընդունվել է	6) Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	7) Հոդված 11-ում օրենքի 14-րդ Հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացումը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (մարմինները) և վերահսկում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը»:	7) Չի ընդունվել	7) Նախագծի ամբողջ հիմքում ընկած է այն մոտեցումը, որ այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացման նկատմամբ չպետք է սահմանվի զինվորական վերահսկողություն: Դա ուղղակիորեն բխում է Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից (մասնավորապես, տես՝ «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

			փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ 2011թ. դեկտեմբերի 16-17-ին կայացած Վենետիկյան հանձնաժողովի 89-րդ լիագումար նիստի ժամանակ ընդունված թիվ 644/2011 կարծիքի 3-րդ բաժնի 32-39-րդ կետերը): Բացի այդ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետական կառավարման մեկ մարմինը չի կարող վերահսկողություն իրականացնել նույն կարգավիճակն ունեցող այլ պետական կառավարման մարմինների գործունեության նկատմամբ:
	8) Հոդված 12-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ «օրենքի 15-րդ հոդվածում «այլընտրանքային» բառերից հետո ավելացնել «զինվորական» բառերը»:	8) Չի ընդունվել	8) Տվյալ առաջարկությունը չի կարող այլևս առարկայական հիմք ունենալ, քանի որ այդ հարցի հետ կապված ընդունվել է ԱԺ պատգամավոր Կ. Նահապետյանի առաջարկությունների 1-ին կետը, որի արդյունքում նախագծի 2-րդ հոդվածում լրացվել է նոր մաս հետևյալ բովանդակությամբ՝ «Պարտադիր զինվորական ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել այլընտրանքային ծառայություն, իսկ այլընտրանքային ծառայություն անցնող քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել պարտադիր զինվորական ծառայություն»:
	9) Հոդված 13-ում օրենքի 17-րդ հոդվածում 2-րդ կետը հանել:	9) Չի ընդունվել	9) Տվյալ առաջարկությունը չի հիմնավորվել և դրա անհրաժեշտությունն անհասկանալի է:

	10) Հոդված 13-ում օրենքի 17-րդ հոդվածում 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Այլընտարանքային աշխատանքային ծառայության վայրը պետք է լինի Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանամերձ գոտում»: Այլընտրանքային աշխատանքային ծառայողը ծառայության վայրում գտնվում է շուրջօրյա: Ծառայության վայր է համարվում կազմակերպությանը տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքով պատկանող տարածքը: Ծառայության վայրում այլընտրանքային աշխատանքային ծառայողի շուրջօրյա գտնվելու անհնարինության դեպքում վերահսկող մարմնի որոշմամբ այլընտրանքային աշխատանքային ծառայողին վճարվում է փոխհատուցում, որի չափը և վճարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»	10) Չի ընդունվել	10) Տես՝ պատգամավոր Հ. Նաղդալյանի առաջարկությունների վերաբերյալ եզրակացությունը:
	11) Հոդված 13-ում 5-րդ մասը հանել:	11) Չի ընդունվել	11) Տես՝ պատգամավոր Կ. Նահապետյանի առաջարկությունների 11-րդ կետի վերաբերյալ եզրակացությունը:
	12) հոդված 15-ի 3-րդ և 5-րդ կետերը հանել:	12) Չի ընդունվել	12) Սահմանված նմուշի արտահագուստ կրելու վերաբերյալ դրույթը հանվել է, քանի որ այլընտրանքային աշխատանքային ծառայողներն այսուհետ իրենց ծառայությունն իրականացնելու են զինվորական վերահսկողությունից դուրս, հետևաբար, որևէ զինվորական արտահագուստ կրելու անհրաժեշտություն չի լինելու, և աշխատանքային արտահագուստ կրելը պայմանավորված կլինի համապատասխան աշխատանքի բնույթով: Իսկ «օրական 8» բառերը «շաբաթական 48» բառերով

	13) Հոդված 17-ում ավելացնել նոր 7-րդ կետ «Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է նույն զորամասում այլընտրանքային ծառայողների առավելագույն թիվը»:	13) Ընդունվել է	փոխարինելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ, նախագծի համաձայն, այլընտրանքային աշխատանքային ծառայողը ծառայության վայրում չի գտնվելու շուրջօրյա, և այդ դեպքում աշխատաժամանակը աշխատանքի բնույթից ելնելով կարող է հաշվարկվել նաև շաբաթական կտրվածքով, այլ ոչ միայն՝ օրական: 13) Բովանդակային առումով ընդունելի է, սակայն դա կարող է վերաբերել միայն այլընտրանքային զինվորական ծառայողներին:
Հեղինակ	1. Նախագծի 3-րդ հոդվածում «ծառայությունն անցնելու հնարավորության բացակայության մասին» բառերը փոխարինել «ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին» բառերով: 2. Նախագծի 6-րդ հոդվածով փոփոխվող 7-րդ հոդվածի 5-րդ մասում «առերևույթ խախտումները» բառերը փոխարինել «ձևական սխալները» բառերով: 3. Նույն հոդվածի 6-րդ մասում «ստանալու» բառը փոխարինել «գրանցելու» բառով: 4. Նույն հոդվածի 7-րդ մասում «դիմումը ներկայացնելու օրվանից 10 օրվա» բառերը փոխարինել «այն տարածքային զինվորական կոմիսարիատում գրանցվելու պահից 30 օրվա» բառերով: 5. Նախագծի 9-րդ հոդվածի երկրորդ կետում «քաղաքացին» բառը փոխարինել «դիմումատուն» բառով: 6. Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխվող 8-րդ		Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ

	հոդվածի 2-րդ մասը հանել:		